«ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի (ԴՊՐՈՑ)
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9 **11.09.2023թ.**

Նիստը հրավիրվել է հեռավար եղանակով: Նիստին ներկա էին կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 7 անդամները, խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Տաթևիկ Մելքոնյանը, նիստին մասնակցում էր դպրոցի գլխավոր հաշվապահ Էռնա Մովսեսյանը, բացակա էին Արկադի Պապոյանը և Սիրանուշ Էլոյանը (արձակուրդում):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցում, Խորհրդի քարտուղարի ընտրություն:

/զեկուցող՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան/

2. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության քննարկում:

/զեկուցող՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան/

3. 2023-2024 ուսումնական տարվա դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշվի, հաջորդ տարվա բյուջեի նախագծի, բյուջետային ֆինանսավորման հայտի, հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակների նախագծերի քննարկում:

/զեկուցող՝ դպրոցի գլխավոր հաշվապահ Է. Մովսիսյան/

4. Դպրոցի ներքին գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար կառավարման խորհրդից առնվազն երկու թեկնածուի առաջադրում և դպրոցի փաստաթղթաշրջանառությանն ու գործավարությանն առնչվող հարցեր՝ ըստ զարգացման ծրագրի:

/զեկուցող՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան/

Լսեցին 1- Նիստի օրակարգը ներկայացնելուց և հաստատելուց հետո կառավարման խորհրդի նախագահ Ա. Միքայելյանը առաջարկեց անցնել օրակարգի հարցերի քննարկմանը:

Տաթևիկ Մելքոնյանը նշեց, որ Խորհրդի անդամ Մարինե Պապոյանի (ծնողական խորհրդի ներկայացուցիչ) որդին ավարտել է դպրոցը, ուստի նրա լիազորությունները դադարել են: Մ. Պապոյանը նաև խորհրդի քարտուղարն էր: Տաթևիկ Մելքոնյանն ասաց,

որ Խորհրդի՝ դպրոցի ծնողական խորհրդի ներկայացուցչի, ընտրությունը կիրականացվի ս.թ. սեպտեմբերի 11-ին:

Խորհրդի նախագահ Արև Միքայելյանն առաջարկեց նիստն արձանագրելու համար ընտրել քարտուղար և ներկայացրեց Նարինե Առաքելյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ 1- Նարինե Առաքելյանը համաձայնեց մինչև նոր քարտուղարի ընտրությունը՝ ստանձնել այդ պարտականությունը:

Լսեցին 2- Տաթևիկ Մելքոնյանը զեկուցեց, որ սեպտեմբերի 5-ին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստերին ուղարկել է դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունը և խնդրել տեղեկացնել առաջարկությունների և դիտողությունների մասին:

Նիստին ներկա անդամներն ասացին, որ ստացել են հաշվետվությունը և որևէ բան փոփոխելու անհրաժեշտություն չկա:

Որոշեցին 2- Հավանություն տալ ներքին գնահատման հաշվետվությանը և այն հրապարակել դպրոցի կայքում:

Լսեցին 3- Դպրոցի գլխավոր հաշվապահ Էռնա Մովսեսյանը ներկայացրեց դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշվի, հաջորդ տարվա բյուջեի, բյուջետային ֆինանսավորման հայտի, հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի նախագծերը:

Էռնա Մովսեսյանը մանրամասն ներկայացրեց ֆինանսական մուտքերն ու ծախսերը: Նա ասաց, որ բյուջեն խնայողաբար են ծախսում և ունեն խնայողություն:

Տաթևիկ Մելքոնյանն ասաց, որ բոլոր մասնագետները մեկական դրույքաչափով ապահովված են, ունեն կամավոր ատեստավորված 7 ուսուցիչ, ևս 7-ը՝ 2023-2024 ուսումնական տարում կմասնակցեն կամավոր ատեստավորմանը:

Տաթևիկ Մելքոնյանը զեկուցեց, որ դպրոցը ֆինանսական խնդիրներ ու պարտքեր չունի, ընդհակառակը՝ ունեն որոշակի խնայողություններ: Դպրոցն ընդգրկվել է հիմնանորոգման ծրագրի մեջ, ինչի արդյունքում դպրոցում ընթացող կոսմետիկ նորոգումները դադարեցրել են՝ ավելորդ ծախսերից խուսափելու նպատակով:

Տաթևիկ Մելքոնյանը ներկայացրեց, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարին էին դիմել խնայողությունների հաշվին տեղեկատվական տեխնոլոգիաներ ձեռք բերելու նպատակով՝

N	Անվանումը	Քանակը	Արժեքը (ՀՀ դրամ)
1.	Պրոյեկտոր	2	280 000
2.	Էկրան	2	60 000
3.	Դյուրակիր համակարգիչ	1	200 000
	Ընդամենը		**820 000**

ԿԳՄՍՆ-ից ստացել են դրական պատասխան:

Որոշեցին 3- Հավանություն տալ ֆինանսատնտեսական փաստաթղթերին և ներկայացնել ԿԳՄՍՆ /կցվում են-1/:

Լսեցին 4- Դպրոցի տնօրենը ներկայացրեց, որ «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման» N 1334-Ն հրամանով հաստատված կարգի 16-րդ կետի պահանջով՝ 2023-2024 ուսումնական տարվա ներքին գնահատում իրականացնելու համար դպրոցի կառավարման խորհրդից այս ուսումնական տարում ևս անհրաժեշտ է առնվազն երկու անդամ ընդգրկել դպրոցի ներքին գնահատում իրականացնող հանձնաժողովում: Նա նշեց, որ ներքին գնահատումը շատ կարևոր գործընթաց է, իսկ վերլուծությունը՝ ծավալուն ու բարդ: Դպրոցի տնօրենը ներկայացրեց, որ նպատակահարմարությունից ելնելով՝ առաջարկում է գնահատման հանձնաժողովում ընդգրկել դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Արև Միքայելյանին և Նարինե Առաքելյանին:

Դպրոցի տնօրենը ներկայացրեց (զարգացման ծրագրի 5.5-րդ խնդրի 1-ին գործողություն), որ դպրոցի փաստաթղթաշրջանառության և գործավարության մասով իրականացվել են՝

1) Իրավական ակտերի հրամանապանապանակի ներդրում.

2) Խորհդի հաստատմանը չներկայացված իրավական ակտերի ներկայացում.

3) Մանկավարժական խորհդի և մյուս խորհդակցական մարմինների արձանագրությունների կազմման նոր ձևաչափի ներդրում:

Որոշեցին 4- Կառավարման խորհրդի անդամներից ներքին գնահատման հանձնաժողովում ընդգրկել դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Արև Միքայելյանին և Նարինե Առաքելյանին:

Խորհուրդը հավանություն տվեց տնօրենի ներկայացրած՝ զարգացման ծրագրի գործողությունների կատարմանը:

Խորհրդի նախագահ՝ **Ա. Միքայելյան**

Քարտուղար՝ **Ն. Առաքելյան**